# ԵԿԵՂԵՑՈՒ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ՄԵԾ ՊԱՅԹՅՈՒՆԻ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Մեծ պայթյունի տեսությունը չի հակասում աշխարհի արարման կաթոլիկական պատկերացումներին: Ուղղափառ եկեղեցին նույնպես դրական վերաբերմունք ունի այդ տեսության նկատմամբ: Որոշ մուսուլմաններ պնդում են, որ Մեծ պայթյունի մասին հիշատակում կա նաև Ղուրանում: Համաձայն հինդուիզմի՝ աշխարհը չունի սկիզբ և վերջ, այն զարգանում է ցիկլերով: Նշվում է նաև, որ ամեն ինչ առաջացել է Բրահմանից, որը փոքր է ատոմից, սակայն մեծ է ամենավիթխարիից:



Ըստ Հռոմի պապ Ֆրանցիսկոսի՝ տարբեր կրոններում առկա Տիեզերքի ստեղծման տեսությունները իրար չեն հակասում, այլ ընդհակառակը՝ լրացնում են: Վատիկանի Պապական գիտությունների ակադեմիայում իր ելույթի ժամանակ Ֆրանցիսկոսը նշել է, որ Մեծ պայթյունի տեսությունը չի հակասում արարման երևույթին: Ըստ Պապի՝ Մեծ պայթյունը և դրանից հետո տեղի ունեցած զարգացումները ոչ թե պատահականություն են, այլ Աստծո կամքի արդյունք: